ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

1990 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ (ԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Հաշվի առնելով 1990 թվականի հունիսի 26-ին Ստամբուլում ստորագրված՝ Ժամանակավոր ներմուծման մասին կոնվենցիայում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ դիմումի նախնական ուսումնասիրման մասին ՍԴ անդամ Հ. Նազարյանի՝ 28.11.2016թ. զեկուցագիրն առ այն, որ նշված դիմումի նախնական ուսումնասիրման ընթացքում բացահայտվել են կից ներկայացված՝ վերոհիշյալ կոնվենցիայի անգլերեն բնագրի և վերջինիս հայերեն թարգմանված տեքստի միջև մի շարք անհամապատասխանություններ, և որ հիշյալ փաստաթղթի՝ պահանջված հայերեն լիարժեք տեքստը դեռևս ներկայացված չէ և լրացել է դիմումի նախնական ուսումնասիրման սահմանված 15-օրյա ժամկետը, ուստի ընդունել նշված գործով ՍԴ անդամ Հ. Նազարյանի առաջարկությունը և ղեկավարվելով ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 19-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ մասով՝ 10 օրով երկարաձգել դիմումի նախնական ուսումնասիրման ժամկետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29 նոյեմբերի 2016 թվականի
ՍԴԱՈ-109